

մննդոց մանկտւոյն . և որպիսի՛ մեծամեծ վնասք իցեն այսոքիկ՝ թողխորհեսցի իւրաքանչիւր ոք . զի մի աստիւն երկարեսցուք 'ի բանս 'ի վերայ յայտնեաց :

Դ . Չարիք աստի՛ արհամարհութիւն կրօնից , և աստուածագաշտութեան մերժումն : Եւ ոչ գիտէ զի պատճառ նախնական այսչափ ազգի ազգի աղանդոց և անկրօնութեանց և անհաւատութեանց են ախտքն այնոքիկ :

Ե . Առաջումն յառաջադիմութեամենայի , և մանաւանդ աստուածագաշտութեան . . . Այլ առ այս անշուշ բազումքը ընդդէմբանս արկցեն ասել 'եթէ հաւաստիք գործոցն զհակուակն վկայեն , զի ամենայն ազինք իւրոպիոյ 'ի զարգացումն գիտութեաց օր ըստ օրէ պայծառանան : — Արդարե այդ այդպէս է . օակայն զարգացումնդ այդ նուազ է յոյժ առ համեմատութեամբ գործեացն և դիւրութեանց՝ որովք հոծ և լի է իւրոպա : . . . Ինյայց յետ այսչափ ջանից , կարգաւորութեանց , գործեաց և հընարագիտութեանց առ 'ի զարգացուցանել զամենեսին յիմաստութեան , 'ի կրթել զնոսա 'ի ծանօթութիւն չշմարտութե , որպէս սակաւաթիւք են շահեալքն : Օինչ այլքն ամենեքին գործիցեն . թատերքդ այդոքիկ գողանան զուշ և զուրուշ ամենեցուն և յիմարեցուցանեն : Ենօլք ամենեցուն նց առաքեն զնոտ 'ի համալսարանս մեծաւ ակնկալութ ուսանելոյ որդւոց իւրեանց , և ծախեն մտադիւր 'ի նոսա զլաստակս քրտանց իւրեանց . այլ նոքա յուլացեալք շրջին 'ի թատերս , վատնեն զդրամնն , և ոչ ինչ ուսեալք՝ յուսահատ մեկնին , և ոմանք անդէն իսկ մեռանին : Համաւօտ ասել . եթէ ոք մտադիւր ուշի ուշով մատք 'ի քննութիւն անցից որ անցանեն 'ի կողմանս իւրոպայ , տեսանէ յայտ յանդիման 'զի բազումքարեաց և անհնարին թշուառութեանց , աղքատութեանց , խռովութեանց , սպանու-

թեանց , անզաւակութեանց , ազգի ազգի անօրէնութեանց , անհաւատութեանց , և բազում յոյժ դատապարտութեանց հոգւոց մայր և սկզբնապատճառ կացեալէ թատրն աշխարհական :

Ո այս ամենայն ասացեալ 'ի զգուշութիւն մերազնեայ սիրելեաց , սկըսանիմք աւասիկ առաջի առնելնոցազօրինակս օգտակարացն թատերական բանահիւսութեանց , ցանկալով զի 'ի լաւն հաստատեսցին , 'ի վնասակարացն զգուշացեալք : Եւ է այս գլխաւորացն և իշխանաւորաց տեղեաց տեղեաց պարտք , զի միաձայն հաւանութեամբ դատապարտ արարեալ զվասակարան , ոչ յանձին կալցեն մուծանել յազգս մեր զսովորութիւն երևելու կանանց 'ի թատեր , կամ պատանեաց 'ի հանդերձս կանացիս . և այսպէս բարեաց ազգին արդեաց և ապագայից պատճառք լինիցին , և մի վնասուց նոցա և դատապարտութեան : Անք զմերն զոր պարտն էր մեզ առնել արարաք . այսուհետեւ 'ի խոհականութիւն նոցին առնեմք յանձն , և մնամք ակնկալութեամբ մեծաւ լաւ զուղղադատ նոցին ընտրութիւն :

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ

Հին և նոր պատիներու ու նագերու վրայ :

ՀԻՆ ատենը պսակը կամ թագը՝ միայն կուռքերու գլուխը կը դնէին հեթանոսները : Պլինիոս կ'ըսէ թէ առջի պսակ զնողը եղեր է Պիոնիսոս կամ Պաքոս՝ Հնդկաստանի տիրելէն ետքը . ուրիշը կ'ըսէ թէ երբոր Պրամազդ Հիտանեանց յաղթեց , ինքը դրաւ առջի պսակը : Խոտ կամ ծառ շմաց որ հեթանոսները անկէ պսակ չինեն իրենց կուռքերուն՝ կ'ըսէ Տերտուղիանոս . զոր օրինակ Առոնոսին պսակն էր թարմ թուզ ու խա-

զող. Արամազդինը կազնի կամ դափնի. Հերայինը սերկելի տերեւ. Իաքոսինը խաղողի տերեւ, խաղողութաղեղ. Դեմետրէինը ցորենի հասկ. Պղուտոնինը նոճ. Հերմէսինը բաղեղ, ձիթենի կամ թթենի. ուրիշներունն ալ զանազան պտուղներ ու ծաղկըներ. ասկէ ընդհանուր կարծիք մըն էր հեթանոսաց մէջ՝ թէ աս տուն կերուն ամէն մէկը մէյմէկ կուռքերունուիրած են :

Իսանկ ահանաւ մեր Տրդատ թագաւորը առջի անգամուն փառաւուրապէս Հռոմէն Հայաստան որ եկաւ, ուզեց որ սուրբ Առևաւորիչը Խնահիտ կուռքին գլուխը ծառի Ճիւղերով պսակ մը դնէ. վասն զի Խնահիտ կամ Արտեմիս հայ կուապաշտներուն գլխաւոր կուռքն էր. բայց սուրբ Առևաւորիչը աս բանս յանձն չառնելով՝ քրիստոնէութեան լուսոյն պըսակով զարդարեց մեր ազգը :

Ատքերը սկսան քուրմերն ալ զոհ ընելու ատեն գլուխնին պսակ դնել. անկէ ետքը նաև թագաւորներն ու իշխանները, վերջը ինչուան կուատան սեղանները, սրբազան անօթները, զոհ ընելու կենդանիները, նաւերը և տներուն դռները սկսան պսակել: Ատքը սկսան ողիմպիական խաղերուն մէջ յաղթողներուն գլուխն ալ դափնի կամ ձիթենի Ճիւղերով զարդարել, անկէ նաև բանաստեղծները և ուրիշ որևէ իցէ երևելի մարդիկ :

Հռոմայեցւոց մէջ զօրավար մը ինչ տեսակ քաջութիւն որ ընէր պատերազմի մէջ, անոր համեմատ պսակ կուտային իրեն. օրինակի համար, պարսպական կ'ըսուեր ան պսակն որ թշնամեաց պարսպին վրայ առջի ելլողին կը տրուեր. պաշարման պսակ կ'ըսուեր անիկայ որ քաղաքը պաշարմանէ ազատողը կ'առնէր. նաւական կ'ըսուեր ան որ ծովային պատերազմի մէջ յաղթողը կ'առնէր. իսկ քաղաքական պսակ կուտային անոր՝ որ քաղաքը թշնամւոյն ձեռքէն կ'ազատէր. և ասիկայ ամենէն աւելի յարդի պը-

սակն էր :

Որովհէտեւ հին ատեն պսակը կուռքերուն պահուած էր, թագաւորները պարզ երիզ մը կը կապէին գլուխնին. ինչպէս նաև Ազեքսանդր ու իր յաջորդները. ետքը կամաց կամաց աներիզը սկիովու ազնիւ քարերով զարդարեցին, և ըսուեցաւ վարսակալ. Աս վարսակալը նեղերիզ մըն էր՝ մետաքսէ կամ բրդէ հիւսած. սովորաբար ձերմակ ու պարզ, երբեմն ալ մարդը տէ : Հռոմայեցւոց մէջ Ազրեղիանոս կայսրը եղաւ առջինը որ գլուխը պըսակ դրաւ կ'ըսեն. անկէ ետքը ամէն կայսերը ալ պսակ կը դնէին: Աս պսակ կամ վարսակալը գլխուն չորս կողմը կը պատէր, ու ետևի դիէն կը կապուէր. ինչպէս որ Արամազդայ պատկերներուն ու Պտղոմեանց և Ասորւոց թագաւորներուն դրամներուն վրայ կը տեսնուի :

Արեւելեան թագաւորները հին ատենէն ՚ի վեր խոյր կը դնէին գլուխնին. ոմանք ալ ան խոյրին վրայ պսակ կը կապէին, ինչպէս որ հին դրամներու վրայ կը տեսնուի :


Դանք հիմակուան պսակներուն ու թագերուն :

Պապական եռապսակ խոյրը թագմըն է՝ իրեք կարդ պսակով. խոյրին վրայ առաջին պսակ գնողը Արմիզդ պապը կը կարծուի. Ա սնիփակիոս և երկրորդ պսակը աւելցուց կ'ըսեն, Յովհաննէս իբ երրորդը :

Կայսերական պսակը որ Հռոմայի կայսերութեան իյնալէն ետքը հնարուեցաւ՝ տեսակ մը խոյր է, վրան կէս կլոր կամարաձև շրջանակ ոսկի. վրան աշխարհք մը, անոր վրան ալ խաչ մը :

Խնդղիայի թագաւորին պսակը չորս խաչով Ալթայի թագին պէս է, մէջ տեղն ալ չորս հատ չուշան. վրան չորս վարսակալ կայ, և բոլորին ծայրը պղտի գունտ մը, վրան ալ խաչ :

Դաղղիայի թագաւորին պսակը ու թը չուշանով կլոր շրջանակ մըն էր՝ վեց վարսակալով, վրան ալ բարդ չուշան մը :



Օ անական պսակներ ու նագեր :

Փորթուգալի , Տանիմարքայի ու
Շուտի թագաւորներուն թագե-
րուն վրայ ծաղիկներ կան պղտիկ շրբ-
ջանակներով գոցած , ծայրն ալ խա-
չով գունտ :

Ա րան գոյ պսակը թագաւորական
իշխանութեան նշան ըլլալով , Ա ենե-
տիկի հասարակապետութեան ատենն
ալ դքսին պսակը ան ատեն գոցեցին՝
երբոր Լիփրոսի թագաւորութիւնն
ալ իրենց ձեռքը անցաւ : Այսպէս ը-
րին նաև Ճենովացիք երբոր Վորսի-
քային տիրեցին :

Ոտուքանայի դքսին պսակին վրայ
բաց է , չորս կողմը առուոյտ ձեացու-
ցած , ու մէջակը Փլորենտիայի շու-
շանը : Այսպէս նաև Աստանիայի թա-
գաւորին պսակին վրայ խոշոր ա-
ռուոյտներ կան . վրան գոյ է , և վերի

ծայրը խաչով աշխարհք դրուած է :

Միջին դարու ատեներբոր կալուա-
ծական տէրութիւնները շատցան , ազ-
նուականներն ալ իրենց նշաններուն
կամ կնիքներուն վրայ սկսան զանա-
զան ձեերով պսակներ կամ թագեր
դնել : Այս պսակները հինգ տեսակ
էին . առաջինը պսակ , բոլոր առուոյտ
կամ կարոս . երկրորդը մարգեզի պսակ , կէս
մը մարգրիտ . երրորդը կոմսի պսակ , ոսկի
շրջանակի վրայ մարգրիտ . երրորդը գերա-
կոմսի պսակ , ոսկի շրջանակ՝ վրան ի-
նը մարգրիտ՝ իրեք իրեքը մէկտեղ .
Երրորդը պսակ , որ խոյր մըն է՝ վը-
րան մարգրիտներով ու ոսկի թելերով
զարդարած : Բայց ամէն ազգ ալ աս
պսակներուն մէջ փոփոխութիւն ը-
րած է :

Հոս դրուած պատկերին մէջի պը-

սակներն ու թագերը ասոնք են .

1. Այսուալիան պսակ . — Այսուալի ըսուեին տասուերկու քուրմերը որ հըռուուլոս հաստատեր էր Հռոմայեցւոց մէջ . ասոնց քրմութեան նշանը ցորենի հասկէ պսակ մըն էր :

2. Պսակ պաշարման .

3. Բաքոսեան պսակ . { Այսոնք վե-

4. Արդքկան պսակ . { Մը ստորա-

5. Ոսկի պսակ . { Կրեցինք :

6. Պապական պսակ կամ խոյր , որ եռապսակ ալ կ'ըսուի :

7. Ոսւսաց կայսեր թագը :

8. Աստրիայի կայսեր թագը :

9. Գաղղիայի թագաւորին թագը :

10. Երկաթի թագ : — Խճապէտեասիկայ երկանի նակ կ'ըսուի , բայց զուտ ոսկի է , վրան 22 հատ ազնիւ քարերով ու ծաղկըներով զարդարած . միայն ներսի կողմէն երկըթէ շրջանակ մը կայ՝ մէկ մատնաչափ լայնքով տափակ ու բարակ : Խճապաւորական թագերուն մէջ ասիկայ ամենէն հռչակաւորը կրնայ ըսուիլ . վասն զի հին աւանդութիւն մը կայ Խտալացւոց մէջ՝ թէ աս թագը մեծն կոստանդիանոս դըրեր է նախ իր գլուխը , և թէ ան մէջի երկըթէ շրջանակը Վրիստոսի տեառն մերոյ բեեռներուն մէկն է : Այս բանիս վրայ 1687^ն ատենները մեծ վէճ ելաւ , բայց անով աւանդութիւնը աւելի հաստատուեցաւ . ուստի հիմա ոչ ոք կը տարակուսի ան երկըթին Վրիստոսի բեեռներէն մէկն ըլլալուն վրայ . և թագը իբրև մասունք պահուած է Այլանի մօտ Անցա քաղաքին եկեղեցին՝ առանձին մատրան մէջ , որ կ'ըսուի Անտոռն սրբոյ բեեռնին . ու տարին մէյմը սեպտեմբերին մէջ թափօվկը պտըտցընեն : Հին ատենը Վերմանիայի կայսերք երբոր Խտալայի ալ տիրեցին , աս թագով կը պսակուէին Խտալայի թագաւոր . ինչպէս որ Աքուիսկրանա քաղաքը արծըթէ թագը կ'առնուին իբրև Վերմանիայի թագաւոր , և Հռոմ ոսկի պսակ կը դնէին իբրև հռոմէական կայսր : Այսոնց մէջ վեր-

ջինն որ երկըթէ թագը պրաւ գլուխը՝ եղաւ Լարոլոս Ե . որ Պոլոնիա քաղաքը պսակուեցաւ 1530^ն մեծ հանդէ . սովէ : Ինկէ ետքը չէր գործածուած աս թագը , ինչուան որ 1805^ն Կաֆոլէն Պոնափառթէն Խտալային տիրած ատենը՝ Այլանի եպիսկոպոսին ձեռքով իր գլուխը դրաւ . և անոր յիշատակ՝ հաստատեց Երկաթի թագին ասպետութիւն : Խակ Ֆիրան չիսկոս Ա Աստրիոյ կայսրը՝ ոմպարտիոյ և Ա Ենետկոյ տիրելէն ետև որոշեց որ իր յաջորդներն ալ ան թագով պսակուին . ինչպէս որ իր որդին ալ Վերմանանտոս Ա հիմակուան վեհափառ կայսրը 1839^ն փառաւոր հանդէսով նոյն թագով պսակուեցաւ Այլան :

11. Ինգղիայի թագաւորին թագը՝ Հոս դրուածը Անգղիացւոց Գիւրգ Դ թագաւորին թագաւորութեան ատենը գլուխը դրածն է : Խրմէ ետքը նստած թագաւորները իրենց թագին ձեւերը քիչ մը փոփոխեցին :

12. Ուկլ կամ Ալլէս նահանգին իշխանին թագը :

13. Աքսի թագ .

14. Արքեզի թագ .

15. Լոմսի թագ .

16. Վերակոմսի թագ .

17. Պարոնի թագ .

18. Ատին արքեպիսկոպոսի խոյր՝ Հասարակ եպիսկոպոսական խոյրն ալ ասկէ տարբերութիւն չունի . միայն ելակի տերեւները չկան վրան : — Այլ ազգին եպիսկոպոսներուն և հայրապետներուն դրածն ալ հիմա գրեթէ աս ձեռքն է . բայց կ'երենայ թէ Այլիկեցւոց ատենը մտած է մեր մէջ ասձեռվ թագ գործածելը . վասն զի անկէ առաջ պատմութեանց մէջ կաթուղիկոսներուն գլուխը դրածը Քունունով կը յիշուի , որ Յունաց եպիսկոպոսներուն քողին նման կը հասկըցուի : Խակ 1140^ն ատենները Աննովկենտիոս Բ պապը ուրիշ ընծաներու հետ խոյր ալխոկեց Վրիգոր կաթուղիկոսին՝ Անորհալոյն եղբօրը . նմա-

նապէս 1181^{ին} 1) ուկիոս Գ. կամ 1) ու-
սիոս պապը խոյր խրկեց Գրիգոր Տղայ
կաթուղիկոսին : Խիսիթար Գրօշ աս
խոյրը Ետք ալ կ'անուանէ :

ԲԱՐՈՅՑԱԿԱՆ

ԽԵՂԱՑԻ ԽՈՍՔԵՐ ՈՒ ԶՈՒՄՐՁԱՎԱՐ ԴԻՊՈՒԱՆՆԵՐ

Պարտիւ ինչուան Երբ պարտիւ է :

ԽԱՐԴՈՒՆ մէկը ձի մը գնելու կ'ըլ-
լայ , քսանըհինդ ոսկի կ'ուզեն : 1 աւ-
է , կ'ըսէ ձիուն տիրոջը . տասնըհին-
դը կանխիկ կուտամ , մնացածը պարտ-
քըս ըլլայ հրամանքիդ : Ձիուն տէրը
կը հաւանի . քանի մը օրէն կ'երթայ
մնացած տասըր ոսկին առնելու : “ Այն ,
ատ չեղաւ , կ'ըսէ ձին գնողը . խօսքեր-
նուս վրայ կենանք . ես ինչ ըսի քե-
զի . մնացածը պարտքս ըլլայ ըսի .
հիմա վճարեմ նէ ինչպէս պարտքս
կրնայ ըլլալ ” :

Խիսիւաբիւ լարեա :

Ի՞ր պատիւը գիտցող մարդուն մէկը
տրտում տխուր կ'երթայ եղեր փողո-
ցէն . մէկը դիմացը կ'ելլէ , ինչ ունիս
բարեկամկ'ըսէ . պատասխան կուտայ
մէկալը թէ “ Պարտք ունիմ , ստակ
չունիմոր վճարեմ ” : — “ Այն կ'ըսէ
մէկալը , ան ալ թող պարտքընտէրդ
մտմտա ” :

Խաբել ուղղին խաբուիլը զուարձալի է :

ԽԱՐԴԸԸ հաւնոցի մը հաւերը
բարձր տեղ մը թառած կը տեսնէ ,
կընայի որ սուտումուտ խօսքերով ա-
նոնց քովը մօտենայ : “ Ձեզի մեծ ա-
ւետիս ունիմ տալու կ'ըսէ . բոլոր
կենդանիները մեծ ժողովք մը ըրին ,
որոշեցին որ մէջելնին ասկէ ետքըսէր
ու խաղաղութիւն ըլլայ . եկէք մենք
ալ հաշտուինք իրարու հետ ու ասկէ

ետե եղբօր պէս ապրինք „ : Խքազա-
ղը աղուեսէն բարեկամիտ , վերկ'ելլ-
է կը շտկուի ու մէյմը չորս դին կը
նայի : — “ Խնչ նայեցար , կ'ըսէ ա-
ղուեսը „ : — Խնչ պիտի նայիմ , կ'ը-
սէ աքաղաղը . ահա երկու հատ շուն
դէպ 'ի հոս կուգան „ : Խզուէսը աս
լսելուն պէս՝ կը ձգէ կը փախչի : “ Այն
կ'ըսէ աքաղաղը , ուր բարեւ . սէր ու
խաղաղութիւն չըրին կենդանիները „ :
Խզուէսը վազելու ժամանակը պա-
տասխանը կուտայ թէ “ Խտ շները
կարծեմ դեռ չեն իմացած „ :

Խին լուսնիւն խռարհութիւն չէ :

ԶԱՓԱՒՈՐ բան սորված երիտա-
սարդ մը ուսումնական ժողովի մը
մէջ գտնուելով ամենեին բան մը չխօ-
սիր : Հայրը կը հարցընէ ասոր առան-
ձին , ինչու համար մէկ քանի բան ալ
դուն չխօսեցար որ անուն ընէիր կ'ը-
սէ : Պատասխան կուտայ երիտասար-
դը , “ Ա ախցայ կ'ըսէ , որ ըլլայ թէ
յանկարծ ելլեն՝ չգիտցած բանս ալ
հարցընեն ” :

Խիւղջ ժաղաւավարութիւն :

Խ զիւովակոս ժդ կաղղիոյ թա-
գաւորը ոտանաւոր մը շարադրած
ըլլալով Պուալը բանաստեղծին կը
ցուցընէ , “ Խնչպէս է աս գրուածքս ” ,
կ'ըսէ : Պուալը կը կարդայ ոտանա-
ւորն ու “ Տէր արքայ , կ'ըսէ , բան
չկայ որ անկարելի ըլլայ հրամանոցդ .
ուզեր էք գէշ ոտանաւոր շինել , յա-
ջողեր է ” :

Խլան բարեկամութեան :

ԽԱՐԴՈՒՆ մէկը կ'ըսէ եղեր . “ Խր-
կու հոգւոյ բարեկամութենէն ետ
կեցեր եմ , մէյմէկ պատճառով . վասն
զի մէկը ոչ երբէք իր վրայ բան մը
զուրցած էր ինձի . մէկան ալ իմ վրաս
ոչ երբէք բան մը ըսած էր ինձի ” :